# Պանարմենիա

## Հայաստանի Ամերիկյան համալսարանն էլ է 20 տարեկան




30 սեպտեմբերի 2011 - 22:13 AMT

PanARMENIAN.Net - Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը սեպտեմբերի 30-ին կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի ուղեկցությամբ մասնակցել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը: Կառավարությունից հայտնում են, որ շնորհավորելով ներկաներին բուհի 20-րդ տարեդարձի առթիվ, վարչապետ Սարգսյանը, մասնավորապես, նշել է. «Այն, որ մենք մեր պետության անկախության 20-ամյակը համադրում ենք Հայաստանի Ամերիկյան համալսարանի 20-ամյակի հետ, ունի հետևյալ խորհուրդը. ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում մեր անկախ պետականության ամրապնդման հիմնական գործիքը պետք է լինի գիտելիքը»:

Վարչապետը գոհունակություն է հայտնել առ այն, որ Հայաստանի Ամերիկյան համալսարանն ունի Միացյալ Նահանգների արտոնագիր, ինչը վկայում է, որ այն այսօր գործընթացներն իրականացնում է ԱՄՆ-ում ընդունված չափանիշներին համապատասխան: Ընդգծելով, որ տարածաշրջանում Հայաստանի Ամերիկյան համալսարանի առկայությունը մեր երկրի հարաբերական առավելություններից է, կառավարության ղեկավարն ասել է. «Մենք պետք է լրացուցիչ ջանքեր գործադրենք համալսարանի գործառույթների ընդլայնման առումով՝ հասկանալով, որ ապագա մրցակցության մեջ մենք կարող ենք հաղթել՝ տաղանդաշատ երիտասարդներին կրթելով»:

Այնուհետև Տիգրան Սարգսյանը հանդիպել է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ: Վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ Հայաստանի Ամերիկյան համալսարանի հիմնադրման 20-ամյակի առթիվ և կրթության ու գիտության բնագավառներում ներդրած ակնառու ավանդի համար ՀՀ պետական ճարտարագիտական համալսարանի մեխանիկա-մեքենաշինական ֆակուլտետի պրոֆեսոր, «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Յուրի Սարգսյանը պարգևատրվել Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալով: